



ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
2015թ. թիվ 25

ՀԱՐԳԵԼԻ ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ

Շնորհակալություն ենք հայտնում անցնող տարվա՝ 2015 թվականի համագործակցության համար: Լիաճույս ենք, որ գալիք՝ 2016 թվականը բոլորիս համար հաջողությունների ու վերելքների, նորանոր ձեռքբերումների տարի է լինելու: Մաղթում ենք առողջություն, երջանկություն, սեր եւ ուժեղ կամք՝ մեր առջև մշտապես գոյացող խնդիրները պատվով լուծելու համար: Թող Ձեր օջախում երբեք չպակասեն հայեցի միտքն ու հոգին: Թող գալիք տարին Ձեզ դարձնի է՛լ ավելի միասնական, համբերատար, հանդուրժող, լի խաղաղությամբ ու բարեկեցությամբ: Թող 2016 թվականը հնչեղ հաղթանակների, միասնության, առաջընթացի ու խաղաղության տարի լինի: Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ:

ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹԵՎԸ՝ 2016-ԻՆ ԸՆԴԱՌԱՁ

Հայաստանի պետական հիմնարկներում աշխատող ակտիվ երիտասարդների առաջարկները արհմիության երիտասարդական թևի գործունեության, ընդլայնման և առհասարակ արհմիության զարգացման ուղղությամբ բազմաթիվ են՝ քարոզչական բազմաբնույթ գործողություններից, սեփական կայքի ստեղծումից մինչև ամենատարբեր միջոցառումներ: Նրանց կարծիքով՝ երիտասարդական թևի զարգացմանը մեծապես կարող են խթանել ինֆորմացիոն մոտիվացիոն աշխատանքները ոչ միայն իրենց ներկայացրած արհմիութենական կազմակերպություններում, այլև առհասարակ հանրապետության պետական հիմնարկներում աշխատողների շրջանում: Իսկ կայացած կառույց ունենալու դեպքում արհմիության անդամը կունենա պաշտպանվածության և ուժի զգացում, համախմբված լինելու, միջոցառումներին մասնակցելու, արժանապատիվ աշխատանքի իր իրավունքը պաշտպանելու պատրաստակամություն:

Հայաստանի պետհիմնարկների հանրապետական արհմիության երիտասարդական թևի ներկայացուցիչների՝ «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի աջակցությամբ անցնող տարում անցկացված սեմինարների արդյունքում երիտասարդական թևն ունեցավ ռազմավարական պլան առաջիկա երեք տարիների համար և կոնկրետ միջոցառումների ծրագիր հաջորդ՝ 2016 թվականի համար:

Նշված միջոցառումները կյանքի կոչելու համար երիտասարդներն ակնկալեցին ճյուղային արհմիության աջակցությունը:

Ճյուղայինի նախագահ Ա.Ասատրյանը, ողջունելով երիտասարդների հաճախակի հանդիպումները, պատրաստակամություն հայտնեց աջակցել երիտասարդների գործողություններին, հույս հայտնելով, որ համատեղ աշխատանքը ավելի կխթանի արհմիության զարգացմանը:

Երիտասարդ արհմիության անդամները հնարավորություն ունեցան ՃՀՄ նախագահի հետ քննարկելու նաև արհմիության արդի խնդիրները: Ա.Ասատրյանը նշեց նաև, որ հաջորդ տարի լրանում է պետհիմնարկների արհմիության 85-րդ տարին, այդ առիթով համառոտ անդրադարձավ նաև արհմիության պատմությանը: Կարևորելով երիտասարդների դերը արհմիության զարգացման գործում՝ ՃՀՄ նախագահը կոչ արեց երիտասարդներին ակտիվ մասնակցություն ցուցաբերել արհմիության կողմից կազմակերպվող զանգվածային միջոցառումներին, այլ երկրների փորձով ընդգծեց երիտասարդական թևի զարգացման նշանակությունը:

**ՀԱՍՏԱՏՎԵՑ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ**

Ընթացիկ տարվա դեկտեմբերի 22-ին կայացավ Հանրապետական եռակողմ հանձնաժողովի հերթական նիստը: Նիստում օրակարգային էր հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի (2015-2018թթ.) մասին հարցը: Ծրագրին առնչվող առանցքային հարցերի շուրջ արհմիության ներկայացուցիչները ներկայացրին հիմնավոր առաջարկներ: Մասնավորապես՝ ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Բ.Խարատյանը առաջարկեց ծրագրում նախատեսել միջոցառումների ժամկետներ՝ ասվածը հիմնավորելով միջոցառումների գերակշիռ մասում դրանց առկայության անհրաժեշտությամբ: Բ.Խարատյանը ներկայացրեց նաև արհմիության կողմի դիրքորոշումը ծրագրում գործատուների հանրապետական միության կողմից ներկայացված այն կետի դեմ, որով կամրագրվեն աշխատաշուկա առաջին անգամ մուտք գործող անձանց համար նվազագույն աշխատավարձի ավելի ցածր շեմի սահմանման կամ որոշակի գործակիցների կիրառման օրենսդրական դրույթներ: Հայաստանի արհմիությունների ներկայացուցիչներին համակարծիք էր նաև ՀՀ կառավարության ներկայացուցիչը, և առաջարկությունը չընդունվեց:

Հանձնաժողովի անդամ, Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ՃՀՄ նախագահ Ա.Ասատրյանը նշեց, որ հաճախ տեղական և պետական կառավարման մարմիններում նոր ընտրված կամ նոր նշանակված ղեկավարներ, խախտելով ՀՀ օրենսդրության՝ մասնավորապես «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի պահանջները, աշխատողներին հրահրում են հրաժարվել արհմիության անդամակցությունից: Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև այն, որ ՀԱՄԿ-ի արհմիության անդամների մեծ մասը պետական ոլորտի աշխատողներ են, ՃՀՄ նախագահն առաջարկեց հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողություններում (2015-2018թթ.) նախատեսել սոցիալական գործընկերության վերաբերյալ սեմինարներ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների շրջանում՝ սոցիալական գործընկերությունում խոչընդոտները բացառելու համար:

Հանձնաժողովի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա.Ասատրյանը խնդրին աջակցության պատրաստակամություն հայտնեց՝ օգտվելով հանրապետական կոլեկտիվ պայմանագրում ամրագրված իրավունքներից, իր՝ կառավարության ներկայացուցչի կողմից համապատասխան ատյաններ դիմելու միջոցով՝ համապատասխան առաջարկի դեպքում:

Հնչեցին նաև միջոցառումների եռամյա ծրագրի հետ կապված այլ առաջարկներ ոչ միայն Հայաստանի արհմիության, այլև գործատուների հանրապետական միության, կառավարության ներկայացուցիչների կողմից:

Նշենք, որ հաստատված ծրագիրն ընդգրկում է սոցիալական գործընկերության կողմերի միջև եռամյա միջոցառումներ հետևյալ ուղղություններով՝ աշխատողների անվտանգության և առողջության պահպանման, աշխատանքի, աշխատավարձի և աշխատողների կենսամակարդակի, աշխատաշուկայի և զբաղվածության, սոցիալական ապահովագրության, սոցիալական պաշտպանության, սոցիալ-տնտեսական ոլորտներում:

ՈՒԺԵՂ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆ, ՈՒԺԵՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Այս և այլ կարգախոսներով Արժանապատիվ աշխատանքի համար գործողությունների օրը՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-ը Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի հանրապետական արհմիությունը ավանդական քայլերթ անցկացրեց մայրաքաղաքի կենտրոնական փողոցներում:

Երթի մասնակիցները ՀՀ կառավարության աշխատակազմի «Մպասարկում» ՊՈԱԿ-ի, Հայաստանի պատմության թանգարանի, Պետական գույքի կառավարման վարչության, Մալաթիա-

Սեբաստիա, Շենգավիթ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, Ազգային վիճակագրական ծառայության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, Գավառի, Աշտարակի, Իջևանի, Արագածի, Մարտունու, Թալինի, Արարատի տարածքային միությունների երկու հարյուրից ավել արհմիության անդամներն էին, երիտասարդ արհմիութենականներ:

Երթի կազմակերպիչ, Հայաստանի պետիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ա.Ասատրյանը բարձրաձայնեց, որ աշխարհի 150 երկրներում արհմիությունները հոկտեմբերի 7-ին տարբեր ակցիաների միջոցով բարձրաձայնում են աշխատողների խնդիրները: Հայաստանյան երթի նպատակը ևս աշխատողների արժանապատիվ աշխատանքի կարևորությունը իշխանությունների ուշադրության կենտրոնում պահելն է:

Երթին միացան նաև ՀԱՄԿ-ի և ճյուղային արհմիությունների ներկայացուցիչներ:

Իրազեկման նպատակով անցորդներին բաժանվեցին թռուցիկներ:

Երթը լուսաբանվեց զանգվածային լրատվության միջոցներով:

Նշենք, որ օրվա առիթով Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան հանդես էր եկել ուղերձով՝ արհմիութենական բոլոր կազմակերպություններին կոչ անելով «համերաշխ գործողություններով նպաստել երկրի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, հուսալով, որ համատեղ գործողություններով հնարավոր է խթանել արհմիութենական շարժման գործընթացը»:

ԱՐՇԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Եվրոպայի արհմիությունների կոնֆեդերացիային (ԵԱԿ) խիստ մտահոգում է այն, որ Եվրոստատի տվյալներով չորս եվրոպացուց մեկը դեռևս աղքատության վտանգի սպառնալիքի տակ է: Չնայած որ Եվրախորհրդի ռազմավարությունն ուղղված է մինչև 2020 թվականը աղքատության սպառնալիքի տակ գտնվող 20մլն բնակչի թվաքանակի կրճատմանը, 2008-ից սկսած նրանց թիվն աճել է 5մլն-ով, իսկ 2014թ. հասել է 122 մլն-ի՝ կազմելով հասարակության 24,4 %-ը: Այս առիթով ԵԱԿ գլխավոր քարտուղարի տեղակալը հայտարարում է. «Եվրոպայի արհմիությունների կոնֆեդերացիան խրախուսում է առաջին հերթին արժանապատիվ աշխատատեղերի ստեղծումը և սոցիալական արդարության ապահովումը: Մարդկանց աղքատությունից զերծ պահելու համար պետք է ընդլայնել ներդրումային ծրագրերը և կոլեկտիվ բանակցությունների միջոցով բարձրացնել աշխատավարձերը»:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՇԽԱՏԱՎԱՐԸ

Սեպտեմբերի 8-ին «Էրեբունի պլազա» բիզնես կենտրոնում կայացավ կլոր սեղան-քննարկում, որտեղ ներկայացվեցին ՀՀ-ում հանրային հատվածի վարձատրության բարեփոխման վերլուծության արդյունքները:

Աշխատանքի միջազգային կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառումում Հայաստանի արհմիությունները ներկայացնում էին Հայաստանի պետիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ա.Ասատրյանը, ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Բ.Խարատյանը, սոցիալ-տնտեսական և աշխատանքի պաշտպանության բաժնի ներկայացուցիչներ:

Միջոցառմանը մասնակցում էին նաև ներկայացուցիչներ Աշխատանքի միջազգային կազմակերպությունից, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից, Հայաստանի գործատուների հանրապետական միությունից, տեղական և միջազգային փորձագետներ:

Միջազգային փորձագետները ներկայացրեցին հանրային ծառայողների աշխատանքի կատեգորիաները, աշխատավարձերի որոշման մեխանիզմները, աշխատավարձերի սանդղակը, վերահսկողությունը տարբեր երկրների օրինակներով:

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների հանրապետական արհմիության նախագահ Ա.Ասատրյանը ներկաների ուշադրությունը հրավիրեց ՀՀ-ում համայնքային ծառայողների աշխատավարձերի կարգավորման անհրաժեշտությանը: Ելնելով մեր հանրապետությունում նշված ծառայողների վարձատրության միասնական սկզբունքի ներդրման անհրաժեշտությունից, ինչն առկա է քաղաքացիական ծառայողների վարձատրության պարագայում՝ ՃՀՄ նախագահը դիմել է նաև ՀՀ վարչապետին՝ առաջարկելով օրենքով ամրագրել համայնքային ծառայողների աշխատավարձերի չափը՝ համայնքային ծառայության յուրաքանչյուր պաշտոնի համար սահմանելով համապատասխան գործակից նվազագույն աշխատավարձի նկատմամբ՝ հաշվի առնելով նաև համայնքային ծառայողի աշխատանքային ստաժը:

Հանրային ծառայողների աշխատավարձերի խնդրի շուրջ քննարկումները շարունակվեցին նաև նոյեմբերի 26-ին, հանրային հատվածի վարձատրության բարեփոխման ծրագրի շրջանակներում կազմակերպված «ՀՀ-ում հանրային ծառայողների վարձատրության միասնական համակարգի շրջանակում առանձին կարգավիճակ ունեցող աշխատողների աշխատավարձի չափերի խորքային վերլուծության արդյունքների ներկայացում» խորագրով կլոր սեղանի շուրջ, որին ևս մասնակցում էր ճյուղային հանրապետական արհմիության նախագահը:

Քննարկման ընթացքում ներկայացվեց կատարված հետազոտության կարևորությունն ու օգտակարությունը:

Հետազոտության հիմնական նպատակը ըստ պաշտոնների քաղաքացիական աշխատանք կատարողների կողմից իրականացվող աշխատանքների բարդությունը, պատասխանատվության աստիճանը վերլուծելն էր, քաղաքացիական աշխատանք կատարողների պաշտոններին համադրելի՝ պետական ծառայություններում հավասարազոր պաշտոններ բացահայտելը, քաղաքացիական աշխատանք կատարողների և պետական ծառայություններում հավասարազոր՝ համադրելի պաշտոնների աշխատավարձերի համեմատական վերլուծությունն ու գնահատումը, առաջարկությունների ներկայացումը:

Ներկայացված առաջարկությունները տարբեր էին՝ կապված քաղաքացիական աշխատանք կատարող որոշ պաշտոնների հիմնական աշխատավարձերի հաշվարկման գործակիցների փոփոխման, բազային աշխատավարձի չափի գնահատման որոշակի մեթոդաբանության մշակման, քաղծառայողների պարգևատրումների սահմանափակումները քաղաքացիական աշխատանք կատարողների համար կիրառելու հետևանքով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԵՂԵՐԱՅԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ՝ ԼԱՏՎԻԱՅԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

2015թ. դեկտեմբերի 9-ին Լատվիայի Հանրապետության մայրաքաղաք Ռիգայում կայացավ Պետհիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների արհմիությունների միջազգային ֆեդերացիայի խորհրդի հերթական՝ վեցերորդ նիստը, որին մասնակցում էր նաև Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Անահիտ Ասատրյանը:

Նիստը ղեկավարում էր ԱՄՖ նախագահ Վ.Սավչենկոն, մասնակցում էին խորհրդի անդամներ և ներկայացուցիչներ Ռուսաստանի, Լատվիայի, Ադրբեջանի, Մոլդովայի, Վրաստանի, Բելառուսի պետհիմնարկների հանրապետական արհմիություններից, հրավիրվածներ:

Խորհրդի օրակարգային հարցերի շրջանակներում մասնակիցները լսեցին և քննարկեցին հյուրընկալող երկրի պետհիմնարկներում աշխատողների աշխատանքային իրավունքների և սոցիալ-տնտեսական շահերի պաշտպանության ուղղությամբ տարվող աշխատանքները: ԱՄՖ խորհուրդն առաջարկեց Լատվիայի հանրապետական արհմիության հաջողված փորձը կիրառել նաև ԱՄՖ անդամ մյուս կազմակերպություններում: Մասնակիցները լսեցին և ի գիտություն ընդունեցին ԱՄՖ անդամ

կազմակերպությունների որոշ ներկայացուցիչների հաղորդումները իրենց երկրներում պետիմնարկների ոլորտում 2015-ի մայիս-դեկտեմբեր ժամանակահատվածում արհմիության իրավիճակի ու խնդիրների մասին:

Հայաստանի պետիմնարկների, ՏԻՄ-երի արհմիության նախագահ Ա.Ասատրյանը համառոտ ներկայացրեց հայկական արհմիութենական առօրյան, խնդիրներն ու դրանց լուծման դժվարությունները: ՃՀՄ նախագահը մասնավորեցրեց, որ մեր հանրապետությունում՝ պետական ոլորտում, հաճախ են ոտնահարվում արհմիությունների իրավունքները՝ մեջբերելով ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության օրինակը, որի ղեկավարությունը արգելել է արհմիության անդամավճարի գանձումը աշխատողներից և, օգտվելով միջազգային գործընկերների հետ հանդիպման հնարավորությունից, նշեց, որ հարցը չկարգավորվելու դեպքում միջազգային գործընկերների աջակցության կարիք կլինի:

Օրակարգային այլ հարցերով ԱՄՖ խորհուրդը հստակեցրեց աշխատողների իրավունքների ու շահերի պաշտպանությանն ուղղված գործողությունների ուղղություններն այն երկրներում, որտեղ գործում են Արհմիությունների համընդհանուր համադաշնության անդամ կառույցները, որոնց թվում նաև Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան է, լսեց ԱՄՖ փոխնախագահի հաղորդումը ԱՄՖ անցնող տարվա մասին, հաստատեց 2016 թվականի տարեկան աշխատանքային պլանը, վերանայեց ֆեդերացիային վճարվող անդամավճարների կարգն ու չափերը և այլ հարցեր:

Նիստից դուրս մասնակիցներն այցելեցին նաև Լատվիայի Հանրապետության Սեյմ (խորհրդարան), որտեղ սոցիալական և աշխատանքային հարցերով հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի որոշ անդամների հետ քննարկեցին Լատվիայի խորհրդարանի և արհմիության համատեղ գործողությունները սոցիալ աշխատանքային հարցերի լուծման ուղղությամբ: Հյուրերը հնարավորություն ունեցան հանդիպելու նաև Սեյմի ղեկավարին, ծանոթացան լատվիական հանրապետության խորհրդարանի գործունեությանը, պատգամավորների աշխատանքային պայմաններին, շրջայց կատարեցին խորհրդարանի շենքում:

Պաշտոնական միջոցառումներից զատ հյուրերը քաղաքային էքսկուրսիայի ընթացքում ծանոթացան Լիտվայի Հանրապետության նախատնական մայրաքաղաքի տեսարժան վայրերին ու գրավիչ միջոցառումներին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱ, ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նոյեմբերի 24-25-ը Հանրային ծառայությունների ինտերնացիոնալը (Public Service International) Հայաստանում անցկացրեց կլոր սեղան՝ «Աշխատանքային միգրացիա և արհմիությունների իրավունքները» թեմայով, Եվրոպայի հանրային ծառայությունների արհմիությունների ֆեդերացիայի (European Public Service Unions) և Աշխատանքի միջազգային կազմակերպության աջակցությամբ:

Միջոցառմանը մասնակցում էին շուրջ 25 ներկայացուցիչներ Ֆրանսիայի, Շվեդիայի, Բելգիայի, ՌԴ-ի, Բուլղարիայի, Մոլդովայի, Լիտվայի, Ուկրաինայի, Վրաստանի, Ուզբեկստանի, Հայաստանի հանրային ծառայությունների արհմիություններից:

Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկան Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էդուարդ Թումայանը, Հանրային ծառայությունների ինտերնացիոնալի գլխավոր քարտուղար Ռոզա Պավանելլին, Աշխատանքի միջազգային կազմակերպության Մոսկվայի գրասենյակի ներկայացուցիչ Սերգեյուս Գլովացկասը:

Հայաստանի արհմիությունները ներկայացնում էին Հայաստանի առողջապահության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Գայանե Արմաղանովան, Հայաստանի պետիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Անահիտ Ասատրյանը, Հայաստանի կոմունալ-բնակարանային տնտեսության և ծառայությունների ոլորտի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների

ճյուղային հանրապետական միության նախագահ Սեդա Հարությունյանը, Հայաստանի մշակույթի և ԶԼՄ-ների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ժանետա Թորոսյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ Վանիկ Բաբաջանյանը:

ՀԱՄԿ-ի նախագահը ողջունեց ինտերնացիոնալի գլխավոր քարտուղարի առաջին այցը տարածաշրջան՝ Հայաստան, և առաջարկեց երկօրյա այցի ընթացքում հնարավորինս ծանոթանալ Հայաստանի որոշ տեսարժան վայրերին:

Ինտերնացիոնալի գլխավոր քարտուղար Ռ.Պավանելլին, ողջունելով մասնակիցներին, ներկայացրեց հանրային ծառայությունների, ինչպես նաև այդ ծառայություններում միգրանտների համար այսօր առկա խնդիրները: Ըստ նրա՝ հանրային ծառայությունների մասնավորեցման և աուստրոսինգի հետևանքով աշխատողները այսօր տարբեր պրոբլեմների առաջ են կանգնած: Հաշվի առնելով, որ հենց հանրային ծառայություններն են պատասխանատու ծայրահեղ վիճակներում, կոնֆլիկտներում հասարակությանը առաջին օգնություն ցուցաբերելու գործում (որպես օրինակ մեջբերելով Փարիզի և Բեյրութի դեպքերը), բանախոսը առաջարկեց ուշադրություն դարձնել հատկապես հանրային ծառայողների աշխատանքի որակին, սթրեսի մակարդակը վերացնելուն, աշխատանքային միգրացիայի խնդիրները լուծելուն:

ԱՄԿ Մոսկվայի գրասենյակի ներկայացուցիչ Ս.Գլովացկասը ևս ներկայացրեց միգրացիոն խնդիրները և դրանցում Աշխատանքի միջազգային կազմակերպության դերը:

Եվրոպան այսօր հեղեղված է փախստականներով, Եվրոպայի երկրները սահմաններ են փակում փախստականների առաջ, իսկ կատարվածը, ըստ մասնակիցների, անթույլատրելի է: Այս առնչությամբ քննարկվեցին արհմիությունների անելիքները: Յուրաքանչյուր մասնակից ներկայացրեց իր երկրում միգրացիայի հետ կապված իրավիճակը:

Հայաստանի առողջապահության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Գ.Արմադանովան անդրադարձավ մեր հանրապետությունում՝ մասնավորապես առողջապահության ոլորտում առկա միգրացիոն հոսքին:

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ա.Ասատրյանը, անդրադառնալով միգրացիայի խնդիրներին, ներկաների ուշադրությունը հրավիրեց նաև վերջին տարիներին Հայաստանում ապաստան գտած սիրիահայ միգրանտների մեծ թվաքանակի վրա: Ըստ նրա՝ 2011-ից ի վեր Հայաստան են ներգաղթել մոտ 16000 սիրիահայեր, որոնց ցուցաբերվող աջակցությունը չի սահմանափակվում միայն ՀՀ կառավարության նախաձեռնություններով: Ա.Ասատրյանը նկատեց, որ Հայաստանը ընդունում է նաև միգրանտներ այլ երկրներից և համոզումը հայտնեց, որ Եվրոպան կհաղթահարի այսօրվա դժվարությունները:

Ամփոփելով քննարկումը՝ Ռոզա Պավանելլին ասաց, Եվրոպան պետք է օրինակ վերցնի Հայաստանից՝ եթե երեք միլիոն բնակչություն ունեցող Հայաստանի պես փոքր երկիրը կարող է ընդունել 16000 փախստական, միթե ուժեղ և մեծ Եվրոպան չի կարող նույնը անել, օրինակ 1 միլիոն մարդ տեղավորել:

Քննարկումներից հետո մշակվեց առաջիկա տարիների աշխատանքների ծրագիր: Հնչեցին տարբեր առաջարկություններ:

Հայաստանի մշակույթի և ԶԼՄ-ների աշխատողների հանրապետական արհմիության նախագահ Ժ.Թորոսյանն իր ելույթում նշեց, որ միայն միասնականությամբ ու համախմբվածությամբ հնարավոր կլինի լուծել արհմիությունների առջև ծառայած խնդիրները:

Ա.Ասատրյանը նշեց, որ մեր հանրապետությունում՝ պետական և տեղական ինքնակառավարման ոլորտում հաճախ խախտվում են արհմիությունների իրավունքները այդ կառույցների ղեկավարների կողմից և առաջարկեց սոցիալական երկխոսությունը զարգացնելու ուղղությամբ տեղեկատվական աշխատանքներ տանել, հատկապես պետական և տեղական կառավարման մարմինների ղեկավարների շրջանում:

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՌՈՐՅԱ

Անձամբ դու ինչո՞վ կարող ես օգնել քո հայրենակցին, երբ նրա տանիքը թշնամու կրակի տակ է...

Այս նշանաբանն էին ընտրել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության արհմիության անդամները, երբ սահմանամերձ բնակավայրերին աջակցելու միահամուռ պատրաստակամությամբ իրենց լուսնաներդրեցին Տավուշի մարզի սահմանամերձ Բերքաբեր գյուղի դպրոցին աջակցելու գործում:

Գիտակցելով պահի կարևորությունը՝ ՀՀ ԱՎԾ արհմիության անդամները անմասն չմնացին հայրենակիցների բեռը մի փոքր թեթևացնելու գործում և նախաձեռնեցին ոչ միայն արհմիության ու սեփական միջոցներով թեթևացնելու Բերքաբերի վատթար վիճակը մեղմելու, այլև սիրիահայ ընտանիքներին օգնելու ազգանվեր գործը:

➤ Հոկտեմբերի 8-ին ՃՀՄ նախագահ Ա.Ասատրյանն ու գլխ.հաշվապահ Ռ.Օհանջանյանը աշխատանքային այցով գտնվում էին Եղեգնաձոր քաղաքում:

Արժանապատիվ աշխատանքի համար գործողությունների օրվա շրջանակներում, Զբաղվածության պետական գործակալության հետ նախնական պայմանավորվածությամբ վերջիններս մասնակցեցին Վայոց ձորի մարզկենտրոնում կայացած աշխատանքի տոնավաճառին:

Մարզում գրանցված 1700-ից ավել աշխատանք փնտրողներին հնարավորություն էր տրվել ծանոթանալու տոնավաճառի մասնակից 29 գործատուների ներկայացրած 110 առկա և 240 սպասվելիք թափուր աշխատատեղերին:

ՃՀՄ նախագահ Ա.Ասատրյանն ու Ռ.Օհանջանյանը աշխատանքային հանդիպում ունեցան Եղեգնաձորի տարածքային արհմիության նախագահ Ս.Ավետիսյանի հետ, քննարկեցին, տարածքային միության զարգացման, տարածքում առկա արհմիութենական խնդիրների լուծման տարբերակներ:

Հանդիպման ընթացքում ՃՀՄ նախագահը կարևորեց նախօրեին՝ Արժանապատիվ աշխատանքի համար գործողությունների օրը, պետիմնարկների արհմիությունն անցկացրած ավանդական երթը՝ ինչը ներկա պայմաններում արհմիության վարկանիշի բարձրացման կարևորագույն գործոն է:

➤ Ընթացիկ տարվա սեպտեմբեր ամսին ճյուղային հանրապետական արհմիության անդամ կազմակերպությունների ղեկավարները Ծաղկաձորում քննարկեցին սոցիալական երկխոսությունը տարբեր մակարդակներում: Ճյուղային արհմիության նախագահ Ա. Ասատրյանը ներկաներին իրազեկեց հանրապետությունում սոցիալական գործընկերության երաշխիք հանդիսացող հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կնքման մասին՝ վավերացված ՀՀ կառավարության, ՀԱՄԿ-ի և Հայաստանի գործատուների հանրապետական միության ղեկավարների կողմից: Պայմանագրով սահմանված կարգով ձևավորվել է եռակողմ հանձնաժողով՝ պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովման նպատակով: Նշենք, որ հանձնաժողովի անդամ է նաև ՀՀ պետիմնարկների արհմիության նախագահ Ա.Ասատրյանը:

Սեմինարի ընթացքում քննարկվեցին սոցիալական երկխոսության տարբեր մակարդակները, խնդիրները. ՃՀՄ նախագահը ներկայացրեց նաև միջազգային փորձը՝ առաջարկելով սոցիալական գործընկերության շրջանակներում այն կիրառել նաև տեղի արհմիություններում:

Երկօրյա սեմինարի ընթացքում ծավալվեցին տարաբնույթ արհմիութենական խորհրդակցություններ: ՃՀՄ նախագահը նկատեց, որ չնայած բազմաթիվ զգուշացումներին, անդամ կազմակերպություններում մշտապես խնդիրներ են առաջանում ֆինանսական տվյալների ներկայացման, դրամարկղային գրքի վարման, փաստաթղթային ձևակերպումների և այլնի հետ:

➤ Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի արհեստակցական կազմակերպության նախագահ, ՃՀՄ նախագահության անդամ Գ.Գևորգյանը ս.թ. սեպտեմբերի 25-27-ը մասնակցել է «Իրավական ասպեկտները սկզբնական արհմիութենական կազմակերպություններում» թեմայով սեմինարին՝ կազմակերպված ՀԱՄԿ-ի ուսումնահետազոտական կենտրոնի կողմից Արհմիությունների Միջազգային Կոնֆեդերացիայի և Պան-Եվրոպական Տարածաշրջանային Խորհրդի աջակցությամբ: ՀԱՄԿ-ի նախագահ Էդուարդ Թումասյանը ներկայացրել է արհմիությունների առջև ծառայած հիմնահարցերը, կարևորել

սոցիալական գործընկերության ուղղությամբ ձեռքբերումները, համագործակցված աշխատանքի անհրաժեշտությունը, ինչպես նաև վերջին շրջանում Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայում իրականացված բարեփոխումները: ՀԱՄԿ-ի իրավաբանական բաժնի վարիչ Մ.Փիլիպոսյանը ներկայացրել է ՀՀ Աշխատանքային օրենսգրքում կատարված վերջին փոփոխությունները, կարևորել գործատու-արհմիություն սոցիալական երկխոսությունը և աշխատանքային օրենսգրքի պահանջների ապահովման անհրաժեշտությունը գործատու-արհմիություն հարաբերություններում: Նա նաև պատասխանել է սեմինարի մասնակիցներին հետաքրքրող մի շարք հարցերի:

**ՊԵՏՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԱՍԵՐ ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՅՍ ԱՆԳԱՄ ՀՅՈՒՐՆԿԿԱԼԵՑ
ՍԱԼԱԹԻԱ-ՍԵՔԱՍՏԻԱՅԻ ՇԱԽՄԱՏԻ ԴՊՐՈՑԸ**

Ճյուղային հանրապետական միության կազմակերպած շախմատի երրորդ առաջնությունն անցկացվեց նոյեմբերի 21-ին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի շախմատի դպրոցում: Շախմատի խաղատախտակների առջև իրենց ուժերը չափեցին Ճյուղային արհմիության անդամ ինը կազմակերպությունների թիմեր՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, Երևանի քաղաքապետարանի, Շենգավիթ, Մալաթիա-Սեբաստիա, Արաբկիր վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ կառավարության աշխատակազմի «Սպասարկում» ՊՈԱԿ-ի, Խարբերդի մասնագիտացված մանկատան աշխատողների արհեստակցական կամակերպությունների թիմերը:

Առաջնության մասնակիցներին ողջունեց ու հաղթական տրամադրություն մաղթեց Հայաստանի պետհիմնարկների հանրապետական արհմիության նախագահ Ա.Ասատրյանը:

Թիմային մրցապայքարի արդյունքում հանրապետական արհմիության գավաթին արժանացավ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության արհմիության թիմը: Արծաթե և բրոնզե մեդալակիրներ դարձան համապատասխանաբար ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատողների արհմիությունների թիմերը:

Անհատական ցուցանիշներով լավագույն ցուցանիշը Սարգիս Մելքոնյանինն էր՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից, ով ևս պարգևատրվեց Ճյուղային արհմիության գավաթով, անհատական հաշվով լավագույն երկրորդ ցուցանիշը Հայկ Կոչեցյանինն էր՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից, բրոնզե մեդալակիր դարձավ Հակոբ Մեջբարյանը՝ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից:

Առաջնությանը մասնակցած բոլոր թիմերը խրախուսվեցին Ճյուղային հանրապետական միության դիպլոմներով և հուշանվերներով:

Միջոցառման ավարտին ՃՀՄ նախագահը շնորհակալություն հայտնեց Մալաթիա-Սեբաստիայի դպրոցի տնօրինությանը շախմատասեր արհմիութենականներին 2015-ին նշված դպրոցում հյուրընկալելու համար, մասնակիցներին էլ հորդորեց նման ակտիվություն ցուցաբերել ՃՀՄ-ի բոլոր միջոցառումներին:

ԱՄԵՆՔԻՆ ՀԱՐԱՋԱՏ, ԱՄԵՆՔԻՆ ԲԱՐԵԿԱՄ

Այդպիսին էր նա, մեր լավագույն ընկերն ու բարեկամը՝ «Լուսանշան» ՊՈԱԿ-ի աշխատողների արհմիության նախագահ ՎԱՉԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ:

Այլևս մեզ հետ չէ իր գործին անմնացորդ նվիրված հմուտ ու փորձառու կազմակերպիչը, աշխատանքային շահերի հետևողական պաշտպանը, վառ հոգու տեր, կենսուրախ ընկերը: Կյանքի 69-րդ տարին չբոլորած՝ սիրտն այլևս ընկրկեց՝ թողնելով անավարտ գործեր, բազում հոգսեր, բարի ու անմոռաց հուշեր...Սրտակից ընկերոջ ու հոգեհարազատ մարդու հիշատակը ընդմիշտ կմնա նրան ճանաչող բոլոր-բոլորի սրտերում...



